ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-348-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«20» «09» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) որոշման «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11002. Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել հավելված N 1–ով սահմանված կինոնկարների թվայնացման ու վերականգնման աշխատանքներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. թվայնացվող և վերականգնվող կինոնկարների ցանկի՝ հավելված N 1,

1.1.2. կինոնկարների թվայնացման և վերականգնման ծախսերի նախահաշվի՝ հավելված N 2,

1.1.3. կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման և վերականգնման կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 3,

1.1.4. ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 4:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները և իրականացնել դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. ապահովել անհրաժեշտ պայմաններ 4 խաղարկային, 9 վավերագրական և 17 անիմացիոն ֆիլմերի թվային կրիչների վրա տեղափոխելու, վերակագնելու, արտատպելու և պահպանելու համար՝ ժամանակի ընթացքում վերջնական պոզիտիվային օրինակի հաճախակի օգտագործման (ցուցադրման) հետևանքով որակական հատկանիշների կորստի (գունային և լուսային խամրում, մեխանիկական վնասվածք, մոնտաժային նորոգում և այլն) վտանգից խուսափելու նպատակով,

2.4.9. ապահովել խաղարկային, վավերագրական և անիմացիոն ֆիլմերի նեգատիվներից լուսանկարների, ազդագրերի պատրաստումը և գովազդատեղեկատվական նյութերի տարածումը,

2.4.10. ապահովել Հայաստանում և նրա սահմաններից դուրս հայկական կինոյի օրերին, շաբաթներին, միջազգային կինոփառատոներին, մասնագիտացված հարթակներին, հեռուստատեսությամբ և համացանցով հայկական կինոժառանգության ֆիլմերի հանրահռչակումն ու տարածումը,

2.4.12. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.13. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.14. պետական մարմնի պահանջով ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր տեսակի փաստաթղթերը,

2.4.15. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով պետական մարմնին ներկայացնել սույն պայմանագրի կատարման հաշվետվություններ,

2.4.16. պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները,

2.4.17. պատվիրատուին տրամադրել թվայնացված և վերականգնված ֆիլմերի թվային կրիչների մեկական օրինակ,

2.4.18. պայմանագրից բխող միջոցառումն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները,

2.4.21. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակային հաշվետվությունը (եզրակացություն կատարված միջոցառման վերաբերյալ, էլեկտրոնային կրիչով, գեղարվեստական և տեղեկատվական նյութեր՝ լուսանկարներ, ազդագրեր և այլն)՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.22. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.24. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.25. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.26. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառման կատարման գործընթացը կազմակերպել **«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,**

2.4.27. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է 71590,5 հազար (յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի օգոստոսի 18-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն

պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 5):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական

մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032555	Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01203271
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պաշտոնակատար՝
Հ. Հակոբյան	Շ. Միրզախանյան
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 1
«20» « 09 » 2023 թ.
ՄՇԴ -348-2023թ պայմանագրի

Թվայնացվող և վերականգնվող կինոնկարների ցանկ

	Ֆիլմի անվանումը	Պետական բյուջեից ֆինանսավորման չափը գումարը (հազ. դրամ)
N	**Թվայնացում և վերականգնում**	**2023 թ.**
1	«Նռան գույնը» ֆիլմի ռեժ. Ս. Փարաջանով ժապավենի հատվածներ (1969թ.) /2400մետր/ ֆիլմ	**2727,0**
2	«Երկրորդ Քարավան» (1950թ.) /2900մետր, 106րոպե/ ֆիլմ	**2732,2**
3	«Աղետ» (1969թ.) /2380մետր, 86րոպե/ ֆիլմ	**12598,8**
4	«Կարինե» (1967թ.) /2599մետր,95րոպե/ ֆիլմ	**6265,7**
5	«Շունն ու կատուն» (1938թ.) /280մետր, 10րոպե/	**1598,4**
6	«Տերտերն ու այծը» (1941թ.) /271մետր, 10րոպե/	**1594,8**
7	«Կախարդական գորգ» (1948թ.) /1010 մետր, 35 րոպե/	**2860,0**
8	«Մի կաթիլ մեղրը» (1968թ.) ռեժ. Վ.Պոդպոմոգով /330մետր, 12րոպե/	**2155,9**
9	«Ջութակը ջունգլիներում» (1969թ.) /207մետր, 8րոպե/	**753,7**
10	«Շերտավոր վագրեր» (1969թ.) /186մետր, 7րոպե/	**709,4**
11	«Փարվանա» (1970թ.) ռեժ. Վ.Պոդպոմոգով /420մետր, 15րոպե/	**1461,0**
12	«Լուր դա լուր» (1972թ.) /215մետր, 8րոպե/	**80,0**
13	«Երջանիկ ավարտ» (1978թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 250 մետր, 9 րոպե	**80,0**
14	«Շնորհալի իշուկը» (1985թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 285 մետր, 10 րոպե	**1401,1**
15	«Պատերազմը մեր փողոցում» (1989թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 285 մետր, 10 րոպե	**877,0**
16	«Մկների ժողովը» (1978թ.) 280 մետր, 10 րոպե	**869,8**
17	«Հազար ու մի հնարք» (1981թ.) ռեժ. Լյուդմիլա Սահակյանց 276 մետր, 10 րոպե	**857,5**
18	«Արձագանք» (1986թ.) ռեժ. Լյուդմիլա Սահակյանց 189 մետր, 7 րոպե	**627,7**
19	«Կախարդական ծիածան» (1979թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 273 մետր, 10 րոպե	**856,4**

20	«Ծանոթ դեմքեր» (1980թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 274 մետր, 10 րոպե	**856,8**
21	«Հսկան, որը երազում էր ջութակ նվագել» (1986թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 242 մետր, 9 րոպե	**780,0**
22	«Շարլ Ազնավուրը Հայաստանում» /«Օգնություն»/ (1989թ.) ռեժ. Լ.Մկրտչյան 284 մետր, 10 րոպե	**460,0**
23	«Հայկական հողի գույնը» (1969թ.) ռեժ. Մ. Վարդանով 434մետր, 16 րոպե	**1346,1**
24	«Փարաջանով» (1998թ.) ռեժ. Դ. Ասկարյան Beta SP /460 մետր/, 60 րոպե	**962,8**
25	«Բարի հետք» (1980թ.) ռեժ. Ռ. Գևորգյանց 278մետր, 10 րոպե	**460,0**
26	«Կղզիներ» (1987թ.) ռեժ. Ռ. Գևորգյանց 1535մետր, 56 րոպե	**4660,8**
27	Ս. Փարաջանովի մասին՝ «Փարաջանովի թաղումը» /250մ./, «Փարաջանովի ցուցահանդեսի բացումը Թբիլիսիում» /250մ./, «Փարաջանով» /180մ./, «Փարաջանովի ցուցահանդես» /250մ./, «Փարաջանով 1999» /250մ./- ընդհանուր 1180 մետր	**3382,8**
28	«Փարաջանով կղզին» (1995թ.) ռեժ. Ա. Հայրապետով /270մետր/, 10 րոպե	**855,4**
29	«Խոստովանություն» ռեժ. Փարաջանով, 1989թ հատված /180 մետր/, 10 րոպե	**597,4**
30	«Սուրբ ծեսերի երկիրը» ռեժ. Էդգար Բաղդասարյան, 2001թ, /1696 մետր/ 62 րոպե	**2701,8**
31	Մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների թվայնացման և վերականգման այլ ծախսեր	**1488,6**
	Ընդամենը	**57721,6**
	ԱԱՀ*	**11544,3**
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ	**71590,5**

* ***ԱԱՀ-ի*** *գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման* ***Կատարողի կողմից*** *որպես* ***ԱԱՀ****, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032555 32571
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Շ. Միրզախանյան

Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 2
«20» «09» 2023 թ.
N 348 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Կինոնկարների թվայնացման և վերականգնման ծառայությունների ծախսերի

N	Ծախսերի անվանումը	չափման միավոր	քանակ	Միավորի գինը (հազ. դրամ)	Գումարը (հազ. դրամ)
1	**«Նռան գույնը» ֆիլմի ռեժ. Ս. Փարաջանով ժապավենի հատվածներ (срезки) (1969թ.) /2400մետր/ ֆիլմի թվայնացում**				**2727,0**
1.1	ժապավենի զննում	մաս	8	12,0	96,0
1.2	պոզիտիվ ժապավենի մաքրում, մշակում	մետր	2400	0,12	288,0
1.3	պոզիտիվ ժապավենի թվայնացում 2400 մետր * 52/24- 5200 վրկ.	վրկ	5200	0,42	2184,0
1.4	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159	159,0
2	**«Երկրորդ Քարավան» (1950թ.) /2900մետր, 106րոպե/ ֆիլմի թվայնացում**				**2732,2**
2.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 578400 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	2325,2	2325,2
2.2	մոնտաժային թերթերի ստեղծում	ֆիլմ	1	50,0	50,0
2.3	թարգմանիչ անգլերեն	էջ	18	6,0	108,0
2.4	անգլերեն ենթագրեր հավաքող	էջ	18	5,0	90,0
2.5	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
3	**«Աղետ» (1969թ.) /2380մետր, 86րոպե/ ֆիլմի թվայնացում և վերականգնում**				**12598,8**
3.1	ժապավենի զննում	մաս	8	12,0	96,0
3.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում	մետր	2380	0,12	285,6
3.3	ժապավենի թվայնացում 2380 մետր x 52/24- 5160 վրկ.	վրկ	5160	0,42	2167,2
3.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 2380 մետր x 52/24- 5160 վրկ.	վրկ	5160	0,18	928,8
3.5	թվայնացված պատկերի և ձայնի վերականգնում	րոպե	86	99,0	8516,2
3.6	մոնտաժային թերթերի ստեղծում	ֆիլմ	1	50,0	50,0
3.7	թարգմանիչ անգլերեն	էջ	18	6,0	108,0
3.8	անգլերեն ենթագրեր հավաքող	էջ	18	5,0	90,0
3.9	թարգմանիչ գերմաներեն	էջ	18	6,0	108,0
3.10	գերմաներեն ենթագրեր հավաքող	էջ	18	5,0	90,0
3.11	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
4	**«Կարինե» (1967թ.) /2599մետր,95րոպե/ ֆիլմի թվայնացում**				**6265,7**
4.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 1253420 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	5038,7	5038,7
4.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 2599մետր x 52/24- 5631վրկ	վրկ	5631	0,18	1013,6
4.3	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
4.4	փոստային ծառայություններ Երևան-Մոսկվա-Երևան	հատ	2	27,2	54,4
5	**«Շունն ու կատուն» (1938թ.) /280մետր, 10րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**1598,4**

5.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 256000 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	1029,1	1029,1
5.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 280 մետր * 52/24- 607 վրկ.	վրկ.	607	0,18	109,3
5.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
5.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
5.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
5.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
6	**«Տերտերն ու այծը» (1941թ.) /271մետր, 10րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**1594,8**
6.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 256000 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	1029,1	1029,1
6.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 271 մետր * 52/24- 587վրկ.	վրկ.	587	0,18	105,7
6.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
6.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
6.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
6.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
7	**«Կախարդական գորգ» (1948թ.) /1010 մետր, 35 րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**2860,0**
7.1	ժապավենի զննում	մաս	3	12,0	36,0
7.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /1010մետր, 350րոպե/	մետր	1010	0,12	121,2
7.3	ժապավենի թվայնացում 1010 մետր * 52/24- 2188 վրկ.	վրկ.	2188	0,42	919,0
7.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 1010 մետր * 52/24- 2188 վրկ.	վրկ.	2188	0,18	393,8
7.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	50	1,0	50,0
7.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	35	30,0	1050,0
7.7	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	35	6,0	210,0
7.8	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
8	**«Մի կաթիլ մեղրը» (1968թ.) ռեժ. Վ.Պոդպոմոգով /330մետր, 12րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**2155,9**
8.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 161000 ռուս.ռուբլի x 4,02 դր.	հատ	1	647,2	647,2
8.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 330 մետր * 52/24- 715 վրկ.	վրկ.	715	0,18	128,7
8.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	40	1,0	40,0
8.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	35	30,0	1050,0
8.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	35	6,0	210,0

8.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
9	**«Քութակը ջունգլիներում» (1969թ.) /207մետր, 8րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**753,7**
9.1	ֆիլմի ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
9.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 207մետր * 52/24- 449 վրկ.	վրկ.	449	0,18	80,8
9.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	15	1,0	15,0
9.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	8	30,0	240,0
9.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	8	6,0	48,0
9.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
10	**«Շերտավոր վագրեր» (1969թ.) /186մետր, 7րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**709,4**
10.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
10.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 186մետր * 52/24- 403 վրկ.	վրկ.	403	0,18	72,5
10.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	15	1,0	15,0
10.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	7	30,0	210,0
10.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	7	6,0	42,0
10.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
11	**«Փարվանա» (1970թ.) ռեժ. Վ.Պոդպոմոգով /420մետր, 15րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**1461,0**
11.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 161000 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	647,2	647,2
11.2	ձայնի թվայնացում << <1	վրկ.	910	0,18	163,8
11.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	30	1,0	30,0
11.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	15	30,0	450,0
11.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	15	6,0	90,0
11.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
12	**«Լուր դա լուր» (1972թ.) /215մետր, 8րոպե/ մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**80,0**
12.1	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
13	**«Երջանիկ ավարտ» (1978թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 250 մետր, 9 րոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**80,0**
13.1	կոշտ սկավարակ 4 ՏԲ /ՌԴ /	հատ	1	80,0	80,0
14	**«Շնորհալի իշուկը» (1985թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 285 մետր, 10 րոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**1401,1**
14.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
14.2	ձայնի սկանավորում << <1	վրկ.	618	0,18	111,2
14.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0

14.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
14.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	60,0	600,0
14.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
15	**«Պատերազմը մեր փողոցում» (1989թ.) ռեժ. Գայանե Մարտիրոսյան 285 մետր, 10 րոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**877,0**
15.1	ժապավենի զննում	մաս	1	12,0	12,0
15.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /285 մետր,10 րոպե/	մետր	285	0,12	34,2
15.3	ժապավենի թվայնացում 285 մետր x 52/24- 618 վրկ.	վրկ.	618	0,42	259,6
15.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 285 մետր x 52/24- 618 վրկ.	վրկ.	618	0,18	111,2
15.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
15.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
15.7	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
15.8	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
16	**«Մկների ժողովը» (1978թ.) 280 մետր, 10 րոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**869,8**
16.1	ժապավենի զննում	մաս	1	12,0	12,0
16.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում 280 մետր, 10րոպե/	մետր	280	0,12	33,6
16.3	ժապավենի թվայնացում 280 մետր x 52/24- 607 վրկ.	վրկ.	607	0,42	254,9
16.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 280 մետր x 52/24- 607 վրկ.	վրկ.	607	0,18	109,3
16.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
16.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
16.7	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
16.8	Կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
17	**«Հազար ու մի հնարք» (1981թ.) ռեժ. Լյուդմիլա Սահակյանց 276 մետր, 10 րոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**857,5**
17.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
17.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 276 մետր x 52/24- 598վրկ.	վրկ.	598	0,18	107,6
17.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
17.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
17.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
17.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0

18	**«Արձագանք» (1986թ.) ռեժ. Լյուդմիլա Սահակյանց 189 մետր, 7 բոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**627,7**
18.1	ժապավենի զննում	մաս	1	12,0	12,0
18.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում 189 մետր, 7 բոպե/	մետր	189	0,12	22,7
18.3	ժապավենի սկանավորում 189 մետր x 52/24- 410 վրկ.	վրկ.	410	0,42	172,2
18.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 189 մետր x 52/24- 410վրկ.	վրկ.	410	0,18	73,8
18.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	բոպե	15	1,0	15,0
18.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	բոպե	7	30,0	210,0
18.7	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	բոպե	7	6,0	42,0
18.8	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
19	**«Կախարդական ծիածան» (1979թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 273 մետր, 10 բոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**856,4**
19.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
19.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, սկանավորում 273 մետր x 52/24- 592 վրկ.	վրկ.	592	0,18	106,6
19.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	բոպե	20	1,0	20,0
19.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	բոպե	10	30,0	300,0
19.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	բոպե	10	6,0	60,0
19.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80	80,0
20	**«Ծանոթ դեմքեր» (1980թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 274 մետր, 10 բոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**856,8**
20.1	ելանյութերից պատկերի թվայնացում /Մոսկվա/ 72100 ռուս.ռուբլի x 4,02 դր	հատ	1	289,8	289,8
20.2	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 274 մետր x 52/24- 594վրկ.	վրկ.	594	0,18	106,9
20.3	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	բոպե	20	1,0	20,0
20.4	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	բոպե	10	30,0	300,0
20.5	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	բոպե	10	6,0	60,0
20.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
21	**«Հսկան, որը երազում էր ջութակ նվագել» (1986թ.) ռեժ. Էլվիրա Ավագյան 242 մետր, 9 բոպե մուլտֆիլմի թվայնացում և վերականգնում**				**780,0**
21.1	ժապավենի զննում	մաս	1	12	12,0
21.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում 242 մետր, 9բոպե/	մետր	242	0,12	29,0
21.3	ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 242 մետր x 52/24- 525 վարկ.	վրկ.	525	0,42	220,5

21.4	Նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 242 մետր x 52/24- 525վրկ.	վրկ.	525	0,18	94,5
21.5	մուլտֆիլմի ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
21.6	մուլտֆիլմի թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	9	30,0	270,0
21.7	մուլտֆիլմի թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	9	6,0	54,0
21.8	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
22	**«Շարլ Ազնավուրը Հայաստանում» /«Օգնություն»/ (1989թ.) ռեժ. Լ.Մկրտչյան 284 մետր, 10 րոպե 2K**				**460,0**
22.1	ֆիլմի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1	20,0
22.2	ռեստավրացիա կադր առ կադր	րոպե	10	30	300,0
22.3	թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6	60,0
22.4	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
23	**«Հայկական հողի գույնը» (1969թ.) ռեժ. Մ.Վարդանով 434մետր, 16 րոպե**				**1346,1**
23.1	ժապավենի զննում	մաս	2	12,00	24,0
23.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /434 մետր,16 րոպե/	մետր	434	0,12	52,1
23.3	ժապավենի թվայնացում 434մետր * 52/24- 940 վրկ.	վրկ.	940	0,42	394,8
23.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 434 մետր x 52/24- 940վրկ.	վրկ.	940	0,18	169,2
23.5	գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	30	1,0	30,0
23.6	ռեստավրացիա կադր առ կադր	րոպե	16	30,0	480,0
23.7	թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	16	6,0	96,0
23.8	կոշտ սկավառակ 6 ՏԲ	հատ	1	100,0	100,0
24	**«Փարաջանով» (1998թ.) ռեժ. Դ. Ասկարյան Beta SP /460 մետր/, 60 րոպե, թվայնացման և վերականգնման**				**962,8**
24.1	«Փարաջանով» կասետ Betacam զննում	հատ	1	4,8	4,8
24.2	«Փարաջանով» կասետ Betacam թվայնացում	րոպե	60	0,3	18,0
24.3	գունային վերականգնում, գունաշտկում	ժամ	2	60,0	120,0
24.4	թվայնացված ժապավենի/ավտոմատ եղանակով /	ժամ	1	360,0	360,0
24.5	վերականգնում /ավտոմատ եղանակով/	ժամ	1	360,0	360,0
24.6	կոշտ սկավառակ 6 ՏԲ	հատ	1	100,0	100,0
25	**«Բարի հետք» (1980թ.) ռեժ. Ռ. Գևորգյանց 278 մետր, 10 րոպե վերականգնման աշխատանքներ**				**460,0**
25.1	գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
25.2	թվայնացված ժապավենի կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
25.3	թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
25.4	կոշտ սկավառակ 4 ՏԲ /ՌԴ /	հատ	1	80,0	80,0
26	**«Կղզիներ» (1987թ.) ռեժ. Ռ. Գևորգյանց 1535մետր, 56 րոպե**				**4660,8**
26.1	ժապավենի զննում	մաս	6	12,0	72,0

26.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /1535 մետր, 56 րոպե/	մետր	1535	0,12	184,2
26.3	ժապավենի թվայնացում 1535մետր * 52/24- 3326 վրկ.	վրկ.	3326	0,42	1396,9
26.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 1535մետր * 52/24- 3326 վրկ.	վրկ.	3326	0,18	598,7
26.5	գունային վերականգնում, գունաշտկում	ժամ	1,5	60,0	90,0
26.6	թվայնացված ժապավենի կադր առ կադր	րոպե	60	30,0	1800,0
26.7	թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	60	6,0	360,0
26.8	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
27	**Վավերագրական նյութեր Ս. Փարաջանովի մասին՝ «Փարաջանովի թաղումը» /250մ./, «Փարաջանովի ցուցահանդեսի բացումը Թբիլիսիում» /250մ./, «Փարաջանով» /180մ./, «Փարաջանովի ցուցահանդես» /250մ./, «Փարաջանով 1999» /250մ./- ընդհանուր 1180 մետր**				**3382,8**
27.1	ժապավենի զննում	մաս	4	12	48,0
27.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /1180 մետր/	մետր	1180	0,12	141,6
27.3	ժապավենի թվայնացում 1180 մետր * 52/24- 2557 վրկ.	վրկ.	2557	0,42	1073,9
27.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 1180 մետր * 52/24- 2557 վրկ.	վրկ.	2557	0,18	460,3
27.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	ժամ	1	60,0	60,0
27.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	40	30,0	1200,0
27.7	թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	40	6,0	240,0
27.8	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
28	**«Փարաջանով կղզին» (1995թ.) ռեժ. Ա. Հայրապետով 270մետր, 10 րոպե**				**855,4**
28.1	ժապավենի զննում	մաս	1	12,0	12,0
28.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /270մետր, 10րոպե/	մետր	270	0,12	32,4
28.3	ժապավենի սկանավորում 270 մետր * 52/24- 585 վրկ.	վրկ.	585	0,42	245,7
28.4	նեգատիվ ձայնագրության ժապավենի զննում, մաքրում, թվայնացում 270 մետր * 52/24- 585 վրկ.	վրկ.	585	0,18	105,3
28.5	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
28.6	թվայնացված պատկերի վերականգնում կադր առ կադր	րոպե	10	30,0	300,0
28.7	թվայնացված ֆիլմի թվայնացված ձայնի վերականգնում /ավտոմատ եղանակով/	րոպե	10	6,0	60,0
28.8	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
29	**«Խոստովանություն» ռեժ. Փարաջանով, 1989թ հատված /180 մետր/, 10 րոպե**				**597,4**
29.1	ժապավենի զննում	մաս	1	12	12,0
29.2	ժապավենի լվացում, մաքրում, մշակում /180մետր, 10րոպե/	մետր	180	0,12	21,6

29.3	ժապավենի թվայնացում 180 մետր * 52/24- 390 վրկ.	վրկ.	390	0,42	163,8
29.4	ժապավենի գունային վերականգնում, գունաշտկում	րոպե	20	1,0	20,0
29.5	թվայնացված պատկերի վերականգնում	րոպե	10	30,0	300,0
29.6	կոշտ սկավառակ 4 ՏԲ	հատ	1	80,0	80,0
30	**«Սուրբ ծեսերի երկիրը» ֆիլմի ռեժ. Էդգար Բաղդասարյան, 2001թ, /1696 մետր/ 62 րոպե, պատկերի վերականգնում Լատվիայում**				**2701,8**
30.1	ֆիլմի վերականգնում 6050 եվրո x 420,3 դր	ծառայություն	1	2542,8	2542,8
30.2	կոշտ սկավառակ 10 ՏԲ	հատ	1	159,0	159,0
31	**Մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների թվայնացման և վերականգման այլ ծախսեր**				**1488,6**
31.1	մուլտիպլիկացիոն կինոնկարների անգլերեն ենթագրերի տեղադրում				580,0
	մոնտաժային թերթերի ստեղծում	*ֆիլմ*	*10*	*25,0*	*250,0*
	թարգմանիչ անգլերեն 10 ֆիլմ 3 էջ	*էջ*	*30*	*6,0*	*180,0*
	անգլերեն ենթագրեր հավաքող 10 ֆիլմ միջինը 3 էջ	*էջ*	*30*	*5,0*	*150,0*
31.2	մուլտիպլիկացիոն կինոնկարների փոստային ծառայություններ Երևան-Մոսկվա-Երևան՝ 5 անգամ	*հատ*	*2*	*27,2*	*272,0*
31.3	վավերագրական կինոնկարների անգլերեն ենթագերի տեղադրում				560,0
	մոնտաժային թերթերի ստեղծում	*ֆիլմ*	*4*	*30*	*120,0*
	թարգմանիչ անգլերեն	*էջ*	*40*	*6*	*240,0*
	անգլերեն ենթագրեր հավաքող	*էջ*	*40*	*5*	*200,0*
31.4	վավերագրական կինոնկարների փոստային ծառայություններ Երևան-Լատվիա-Երևան	հատ	2	38,3	76,6
	Ընդամենը				**59658,7**
	ԱԱՀ 20%				**11931,7**
	ԱՄԲՈՂՋԸ				**71590,5**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032555
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 3

«20» «09» 2023 թ.

N ՄՇԴ-348-2023 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032555
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ. _____Հ. Հակոբյան
/ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Կ.Տ. _____ Շ. Միրզախանյան
/ստորագրություն/

Հավելված N 4
«20» «09» 2023 թ.
N ՄՇԴ-348-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 5
«20 » « 09» 2023 թ
N ՄՇԴ-348 -2023 պայմանագր

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության գլխավոր քարտուղար _____
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝